Ընդհանուր–քննիչների հակակշռին պիտի ենթարկվէին շրջանի վարչութիւնը, արդարադատութիւնը, ոստիկանութիւնն ու ժանդարմերիան: Ի հարկին, տեղական զօրքերն ևս պիտի տրամադրվէին նրանց՝ հանրային անդորրութեան պահպանութեան համար: Նրանք իրաւունք պիտի ունենային նշանակել, հեռացնել և դատի ենթարկել պաշտօնեաներին. բարձր պաշտօնեաներ նշանակելիս պիտի առնէին սուլթանի հաւանութիւնը: Հողային վէճերը պիտի լուծվէին քննիչների անմիջական հսկողութեան տակ: Օրէնքներն ու կառավարական կարգադրութիւնները պիտի հրատարակվէին տեղական լեզուներով, և ազգաբնակութիւնը իրաւունք պիտի ունենար գործածել իր լեզուն վարչութեան ու դատարանի մէջ: Իւրաքանչիւր ազգ պետական բիւջէից կրթական գործի համար պիտի ստանար որոշ գումար՝ համեմատ իր վճարած հարկի, այլև իրաւունք պիտի ունենար նոյն նպատակով նշանակել ազգային տուրք: Զինուորական ծառայութիւնը պիտի կատարվէր իր վայրում: Համիդիէ գնդերը պիտի վերակազմվէին: Ժողովուրդների, կրօնների և լեզուների իրական փոխյարաբերութիւնները պիտի ճշտվէին մարդահամարով, որը պիտի կատարվէր ընդհանուր–քննիչների հսկողութեան տակ: Վիլայէթներում գոյութիւն պիտի ունենային ժողովրդից ընտրուած ընդհանուր և վարչական խորհուրդներ:

Այսպիսով, յուն. 26–ի բարենորոգումների ծրագիրը Հայաստանում հաստատում էր համարեա նոյն դրութիւնը, ինչ որ կար արդէն Լիբանանում, այն հիմնական տարբերութեամբ, որ Լիբանանի ընդհանուր նահանգապետը թիւրքահպատակ էր, մինչդեռ այստեղ՝ պէտք է լինէին եւրոպացիներ:*)

Այս ծրագիրը լիովին չէր համապատասխանում հայերի բաղձանքներին: Նրանք դժգոհ էին հայկական նահանգները երկու շրջանի բաժանելուց: Բացի այդ, նրանց շատ էր անհանգստացնում ծրագրի շուրջ յարուցած հակամարտութիւնն ու թիւրք կառավարութեան բռնած բացայայտ թշնամական դիրքը, մի փաստ, որի վրա մատնանշում էր և Գուլկեւիչը իր կառավարութեան ներկայացրած հաղորդագրութեան մէջ: «Հայկական հարցի մասին Բարձր Դրան հետ համաձայնութեան յանգելու համար, հեռագրում էր նա ծրագրի ստորագրութեան յաջորդ օրը, յուն. 27–ին, կայսերական դեսպանին պէտք եղաւ յաղթահարել մեծ դժուարութիւններ: Մի կողմից նա ստիպված էր հաշիւ առնել հայերի բնական ձգտումը, ըստ կարելոյն, աւելի լայն բարենորոգումներ ստանալու, միւս կողմից՝ Բ. Դրան յամառ դիմադրութիւնը, որով նա աշխատում էր ի չիք դարձնել առաջարկված բարենորոգումները և այդ նպատակով ծառանում էր մեր նախագծի բոլոր էական կէտերի դէմ: Իսկ ինչ վերաբերում է Գերմանիային, նա մեզ հետ հայկական հարցի մասին համաձայնութեան մտաւ երկու նպատակով. նախ՝ որպէսզի կարողանայ ասել Բ. Դրան, որ ինքը Ռուսաստանին յետ է պահել լայն բարենորոգումներից՝ տալով իր համաձայնութիւնը Թիւրքիայի համար վտանգ

*) Сборник дипломатических документов . Реформы в Арменіи. Изд. министерства иностр. дѣл. Петроград, 1915.